

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 8 Ա

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Ք.Երևան
Ժ.12.00

8 օգոստոսի 2011թ.

Մասնակցում էին Երևանի ավագանու 41 անդամներ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Կ.Կարապետյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին Երևանի քաղաքապետի տեղակալ Վ.Առաքելյանը, քաղաքապետի գլխավոր խորհրդական Դ.Մելքոնյանը, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Վ.Ստեփանյանը, քաղաքապետի մամլո քարտուղար Շ.Սարգսյանը, աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զ.Առաքելյանը, աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա.Ամյանը, աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ.Նիկոյանը, աշխատակազմի զարգացման և ներդրումային ծրագրերի վարչության պետ Է.Ներսիսյանը, աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետի տեղակալ Տ.Աստվածատրյանը, աշխատակազմի մշակույթի վարչության պետ Կ.Մովսեսյանը, աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Ա.Գևորգյանը, աշխատակազմի կազմակերպական վարչության պետի ժ/պ Ի.Գրիգորյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N169-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին:

2. Երևան քաղաքի հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին:

3. Գույք ընդունելու մասին:

4. Երևանի քաղաքապետի 2011 թվականի օգոստոսի 2-ի N3385-Ա որոշմանը համաձայնություն տալու, Երևանի ենթակայության «ՆՈՐ ԲԱՐԵՎԱՐԳՈՒՄ», «Երևաննախագիծ», «ԶԵՎԱՎՈՐՈՒՄ» և «Երքաղլույս» փակ բաժնետիրական ընկերությունների խորհուրդների քանակական կազմերը հաստատելու մասին:

5. «Երևան Սիթի Փարքինգ Սերվիս Սիստեմս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն ստեղծելու մասին:

6. Երևանի քաղաքապետարանի և Պեկինի քաղաքապետարանի միջև համագործակցության հուշագիրը հաստատելու մասին:

7. Երևանի քաղաքապետի 2011 թվականի հուլիսի 11-ի N3012-Ա որոշմանը համաձայնություն տալու մասին:

8. Երևանի քաղաքապետի 2011 թվականի օգոստոսի 2-ի N3400-Ա որոշմանը համաձայնություն տալու մասին:

1.ԼՍԵՑԻՆ- Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N169-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ-Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ.Նիկոյանը:

ՈՐՈՇՎԵՑ-1.Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի մասին» N169-Ն որոշմամբ հաստատված

- 1) եկամուտների գումարն ավելացնել 1,734,600.0 հազ. դրամով,
- 2) ծախսերի գումարն ավելացնել 1,734,600.0 հազ. դրամով:

2.Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի մասին» N 169-Ն որոշմամբ հաստատված NN 1, 2, 3, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար NN1-5 հավելվածների:

3.Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի ֆոնդային մասի պահուստային ֆոնդից 2011 թվականի ինն ամսում հատկացնել մինչև 339,022.1 հազար դրամ, որից

1) 269,022.1 հազար դրամ՝ Երևան քաղաքի հեղեղատար կոյուղու վերակառուցման աշխատանքների համար՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» հոդվածով,

2) 70,000.0 հազար դրամ՝ Երևան քաղաքի Կոմիտասի անվան այգու՝ պանթեոնի տարածքի բարեկարգման և վերանորոգման համար՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» հոդվածով:

4.Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից 2011 թվականի ինն ամսում հատկացնել մինչև 700,000.0 հազ. դրամ, որից

1) 600,000.0 հազար դրամ՝ Ասիական զարգացման բանկի կողմից տրամադրվող վարկային միջոցներով իրականացվող «Քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ծրագրի» շրջանակներում Երևան քաղաքի վարչական սահմաններում գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում օտարվող սեփականության (հողերի) դիմաց փոխհատուցում տրամադրելու համար՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով,

2) 100,000.0 հազար դրամ՝ «Երևան» հիմնադրամին բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» հոդվածով:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

2.ԼՍԵՑԻՆ- Երևան քաղաքի հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ-Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա.Ամյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ-Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ Հրաչ Պողոսյանը:

ՈՐՈՇՎԵՑ- Համաձայնություն տալ 2011 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված Երևան քաղաքի հողային հաշվեկշռին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 40
դեմ – 0
ձեռնպահ – 1

Որոշումն ընդունվեց ձայների մեծամասնությամբ

3.ԼՍԵՑԻՆ- Գույք ընդունելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ-Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զ.Առաքելյանը:

ՈՐՈՇՎԵՑ-1.Որպես նվիրաբերություն ընդունել Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող գույքը, համաձայն հավելվածի՝ ճանապարհ կառուցելու համար:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

4.ԼՍԵՑԻՆ-Երևանի քաղաքապետի 2011 թվականի օգոստոսի 2-ի N3385-Ա որոշմանը համաձայնություն տալու, Երևանի ենթակայության «ՆՈՐ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ», «Երևաննախագիծ», «ԶԵՎԱՎՈՐՈՒՄ» և «Երբաղույս» փակ բաժնետիրական ընկերությունների խորհուրդների քանակական կազմերը հաստատելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ-Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զ.Առաքելյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ-Երևանի ավագանու «Բարգավաճ Հայաստան» խմբակցության ղեկավար Գուրգեն Գասպարյանը:

ՈՐՈՇՎԵՑ-1. Համաձայնություն տալ Երևանի քաղաքապետի 2011 թվականի օգոստոսի 2-ի «Երևանի քաղաքապետի 2010 թվականի մարտի 3-ի N 983-Ա, մարտի 26-ի N 1364-Ա և ապրիլի 21-ի N1655-Ա որոշումների մեջ փոփոխություն կատարելու մասին» N 3385-Ա որոշմանը:

2.Հաստատել «ՆՈՐ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ», «ՁԵՎԱՎՈՐՈՒՄ», «Երևաննախագիծ» և «Երքաղլույս» փակ բաժնետիրական ընկերությունների խորհուրդների քանակական կազմերը՝ յուրաքանչյուրում՝ 5-ական անդամ:

3.Սահմանել, որ Երևան քաղաքի ավագանու կողմից սույն որոշման 2-րդ կետում նշված յուրաքանչյուր ընկերության խորհրդի կազմում ընտրելու (նշանակելու) համար առաջադրվելու է 1-ական ներկայացուցիչ:

4.Սույն որոշման 2-րդ և 3-րդ կետերն ուժի մեջ են մտնում «ՆՈՐ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ», «ՁԵՎԱՎՈՐՈՒՄ», «Երևաննախագիծ» և «Երքաղլույս» փակ բաժնետիրական ընկերությունների կանոնադրությունների փոփոխության պետական գրանցման և ««ՆՈՐ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ», «ՁԵՎԱՎՈՐՈՒՄ», «Երևաննախագիծ» և «Երքաղլույս» փակ բաժնետիրական ընկերություններում խորհուրդ ստեղծելու մասին» Երևանի քաղաքապետի որոշումն ուժի մեջ մտնելու պահից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

5.ԼՍԵՑԻՆ-«Երևան Սիթի Փարքինգ Սերվիս Սիստեմս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն ստեղծելու մասին

ՁԵԿՈՒՑԵՑ-Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի զարգացման և ներդրումային ծրագրերի վարչության պետ Է.Ներսիսյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ-Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ, ավագանու ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Նաիրա Նահապետյանը:

ՈՐՈՇՎԵՑ-1.Ստեղծել «Երևան Սիթի Փարքինգ Սերվիս Սիստեմս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն:

2.Սահմանել «Երևան Սիթի Փարքինգ Սերվիս Սիստեմս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալը՝ 1000 հազ. դրամ:

3.Հաստատել «Երևան Սիթի Փարքինգ Սերվիս Սիստեմս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

4.Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել պետական գրանցումը և ընկերության հիմնադրի՝ օրենքով սահմանված մյուս լիազորությունների իրականացումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

6.ԼՍԵՑԻՆ-Երևանի քաղաքապետարանի և Պեկինի քաղաքապետարանի միջև համագործակցության հուշագիրը հաստատելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ-Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետի տեղակալ Տ.Աստվածատրյանը:

ՈՐՈՇՎԵՑ- Հաստատել 2011 թվականի հուլիսի 29-ին Պեկին քաղաքում ստորագրված Երևանի քաղաքապետարանի և Պեկինի քաղաքապետարանի միջև համագործակցության վերաբերյալ հուշագիրը՝ համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

7.ԼՍԵՑԻՆ-Երևանի քաղաքապետի 2011 թվականի հուլիսի 11-ի N3012-Ա որոշմանը համաձայնություն տալու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ-Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի վարչության պետ Կ.Մովսեսյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ-Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ Լևոն Իգիթյանը:

ՈՐՈՇՎԵՑ- Համաձայնություն տալ Երևանի քաղաքապետի 2011 թվականի հուլիսի 11-ի «Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2011 թվականի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» հ. 3012-Ա որոշմանը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

8.ԼՍԵՑԻՆ-Երևանի քաղաքապետի 2011 թվականի օգոստոսի 2-ի N3400-Ա որոշմանը համաձայնություն տալու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ-Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զ.Առաքելյանը:

ՈՐՈՇՎԵՑ- Համաձայնություն տալ Երևանի քաղաքապետի 2011 թվականի օգոստոսի 2-ի ««Քաղաքաշինություն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին» N3400-Ա որոշմանը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Կ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Արձանագրեց՝
Ն. Ղուկասյանը